



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՍՈՒՐԲ

ԱՍՏՈՒԱԾԱԾԿԱՅ

ՏՐԱՇԱԳՈՐԾ ՄԻՏԱԼԻՆ

Պ ԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱԶՆԵՐՈՒ ՎԱՆԿԸ

1838



h 261



ՄԱՐԻԱԾ ԿՈՅՍ  
ՈՐ ԱՆԱՐԱՏ ՅԴԱՑԱՐ,



ԲԱՐԵԽՕՍԵԱ  
ՎԱՍՆ ԱԳԱՒԻՆԵԼՈՑՍ Ի ՔԵԶ

ՍՈՒՐԲ

# ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ

ՀՐԱՀԱԳՈՐԾ ՄԻՏԱԼԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

---

ԱՍՏՈՒԾՈՅ անհուն ողորմու  
թեան միջնորդը ամեն ատեն  
սուրբ Աստուածածինն եղած  
է . և ինքը ամեն անգամ որ նոր  
բարեխօսութիւն մը ըրեր է Աս  
տուծոյ հաւատացեալոց համար  
նէ՛ նոր կերպով մըն ալ իր սի  
րելի ծառաներուն յայտներ է  
իր միջնորդութիւնը, որ ամ  
մէնքն ալ ճանչնան Աստուծոյ  
ողորմութիւնը, և իր սրաշապա  
նութեանը բոլոր սրտանց ա

պաւլինին : Մեր ատեններն ալ  
 որ քուէրա ըսւած մահաբեր  
 հիւանդութիւնը բոլոր Եւրո-  
 պա պտրատելով սոսկալի ջարդ  
 սոււաւ , սուրբ Աստուածածին  
 յայանի ըրաւ իր զօրաւոր բա-  
 րեխօսութիւնը մէկ հրաշագործ  
 միտալով մը՝ վերան իր անարատ  
 յղութեան պատկերը սուգած ,  
 որ անով մենք ալ իր անարատ  
 տութեանը հետեւելով մեղքէ  
 ետ կենանք , գիտնալով որ Աս-  
 տուծոյ բարկութեան մէկհա-  
 տիկ պատճառը մեր մեղքն է :

Փարէզ քաղքին մէջ յամի  
 տեառն 1830 հիւանդներու ծա-  
 ռայող կրօնաւոր կուսանքնե-  
 րէն մէկը որ դեռ նորընծայու-  
 թեան մէջն է եղեր՝ ջերմեռանդ  
 սրտով աղօթք ըրած ատենը՝  
 աչքին կերկնայսիրուն Աստուա-  
 ծածնայ անարատ յղութեան  
 պատկերք մը՝ ոտքի վերայ կե-  
 ցած , ու թևերը գէսլ ՚ի վար .



ձեռքներէն ալ սքանչելի սպա-  
 ծառ լոյս մը ցածրած : Արդար  
 կոյսը զմայլած աս տեսիլքին վը-  
 րայ կրնայէր, ասանկ ձայն է կաւ-  
 իրեն . « Աս լոյսը նշան է ան շը-  
 նորհքներուն՝ որ սուրբ Աստուա-  
 ծածին իր բարեխօսութեամբը  
 մարդկանց համար կառնէ Աս-  
 տուծմէ » : Մէյմալ նայեցաւ որ  
 ան սլատիկերքին բոլորակըր ոսկի  
 գրով ասանկ աղօթք մը գը-  
 րած էր . Մարիամ կոյս, որ անա-  
 բար յղացար, բարեխօսեա վասն ա-  
 պաւինեւոյս 'ի + եղ :

Քիչ մը ատենէն էտե սլատ-  
 կերքին մէկալ էրեսը ասդին  
 կրդառնայ . կոյսը կրտեանայ  
 որ անոր վըրան ալ M, այս-  
 ինքն Մ գիրը կայ (որ Մարիամ  
 անունին առջի գիրն է) . անոր  
 վըրան սղտիկ խաչ մը, տակն  
 ալ էրկու սիրտ, այսինքն սիրտ  
 Յիսուսի և Մարիամու : Աս ինչ  
 պատորը պայրանելով երբորչուա

րեր էր կոյսը, մէկ ասանկ ձայն  
մըն ալ կըլլէ. «Մէկ միտալ մը  
ապել տալու է աս պատկերքին  
նման. ով որ անոր վըրայ նե-  
րողութիւն դնել տայ ու իր վը-  
րայ պահէ, ու վըրայի կարճ ա-  
ղօթքը սրտանց ըսէ նէ, սուրբ  
Աստուածածնայ մանաւոր  
պաշտպանութիւնը կըհասնի ա-  
նոր»:

Տեսիլքը կանցնի, էտեի օրը  
կերթայ բարեպաշտ կոյսը աս  
բանս տեղնիտեղը կըհասկըցնէ  
իր հողևոր հօրը. ան ալ փուճ  
երևակայութեան տեղ դնե-  
լով՝ հարկաւոր խրատը կուտայ  
կուսին, թէ սուրբ Աստուա-  
ծածնայ ճշմարիտ ջերմեռան-  
դութիւն անով կըլլայ՝ որ  
մարդ ջանայ կըրցածին չափ ի-  
րեն առաքինութիւններուն հե-  
տեիլ. ասով իր պաշտպանու-  
թիւնն ալ մեր վըրայէն անպա-  
կաս կըլլայ: Բարեսիրտ կոյսն

ալ առանց տարակուսելու մտիկ  
կրնէ կրկէնայ, ու մէյմընալ ջի  
մամտար ան տեսիլքին վըրայ:

Վեց եօթը ամսէն էառ նո-  
րէն կրտեանայ նոյն տեսիլքը  
նոյն կերպով, ուստի նորէն կեր-  
թայ կիմացընէ հոգևոր հօրը.  
խակ անիկայ առջի անդամուն  
պէս կրխրատէ զինքը ու կար-  
ծրկէ:

Մտոր վըրայ վեց ամիս ալ  
կանցնի, նոյն տեսիլքը նորէն  
կրտեանայ կոյսը, կերթայ նո-  
րէն կրպատմէ խոստովանահօ-  
րը: Անատենը քահանան ա-  
ռանց նշան մը ցըցընելու կրսկի  
մամտալ որ չըլայ թէ ինքը  
անհոգ երևնայ կամ անպա-  
տուութիւն մը ըրած երևնայ  
սուրբ Աստուածածնայ, որ գու-  
ցէ կուզէ ասով ցըցընել թէ ըս-  
տուգապէս և ամմէն ատեն ին-  
քը մեղաւորաց ասպուէնն է:  
Այսու ամենայնիւ իրեն աւելի

կերևնար թէ կրնայ աղ ջիկը երևակայու թեամբ մը խաբուիլ ուստի բանի տեղ չի դրաւ :

Միայն թէ մէկ քանի շաբ թէն Փարիզու արքեպիսկոպոսին հետ տեսնուելու դացած ըլլալով ուրիշ խօսքերէն ետքը կրպատմէ իրեն սա զարմանալի տեսիլքը : Եպիսկոպոսը երբոր ամմէն բանին կը տեղեկանայ նէ՛ ես մէկ անպատշաճ բան մը չեմ տեսնար, կըսէ, որ ատանկ միտալ մը կոխել տեսիլքին մէջ երևցածին նման. և չէ թէ միայն սուրբ կրօնքին դէմ չելլար, հապա շատ վայելուչ բան ալ է որ նոր ջերմեռանդութիւն մը ըլլայ սուրբ Աստուածածնայ պատուոյն համար. թէ որ կոխել տաս նէ, կըսէ, էն առաջ ատանկ միտալ մը ես կը փափաքիմ ունենալու : Ասկէց սիրտ կառնէ քահանան ու էտեէ կըլլայ որ աս միտալը կոխել տայ :

Աւաքինի կոչսը երբոր կըլսէ  
 իր խոստովանահօրը վերջն կամ-  
 քը նէ, կըսկսի մտմտալ թէ ար-  
 դեօք ինչպէս որ սլատկերբին  
 մէկ կողմը աղօթք կար գրած,  
 մէկալ դին ալ աղօթք մը դնե-  
 լու է թէ չէ: Անատեն նորէն  
 ձայն կըլսէ թէ ան կողմին վը-  
 րայ աղօթքի տեղ բաւական են  
 Յիսուսի ու Մարիամու սուրբ  
 սրտերը. և աս բանս ալ կեր-  
 թայ իմաց կուտայ խոստովա-  
 նահօրը:

Վերջապէս յամի տեառն 1852  
 տեսիլքին նման միտալը կոխել  
 սկսաւ Փարիզու մէջ, և ան օրի-  
 նակին նմանը կոխեցաւ ուրիշ  
 տեղեր ալ: Առջն կոխւած մի-  
 տալներէն առջն առնողները  
 նոյն հիւանդանոցին կուսանքը  
 եղան, որ իրենց ձեռքը եղած  
 հիւանդներուն մէյմէկ հատ սը-  
 լին. ետքը շուտ մը ջերմեռան  
 դուրծիւնը տարած լեցաւ բոլոր

քաղքին մէջ, ու դուրս տեղ  
ւանք ալ:

Որովհետև անատեն քոչերա  
հիւանդութիւնը նորէն ընկած  
էր Փարէզ քաղաքը, նոյն հի-  
ւանդանոցին մէջ մէկ պղտիկաղ-  
ջիկ մըն ալ բռնըւեցաւ ու մեռ-  
նելու վերայ էր: Առւանայ մայ-  
րապետը աս խնացածին պէս՝  
Նայեցէք, չըլլայ թէ ան խեղ-  
ճին ճիտը դեռ միտալը չէ կախ-  
ւած ըսաւ: Տեսան որ անանկ  
է, մէկէն 'ի մէկ կախել տըւաւ  
անոր վիզը, ան ալ սիրով ըն-  
դունեցաւ մէյմալ նայիս որ քա-  
նի մը վայրկեան անցաւ չանցաւ,  
հիւանդը մեռնելէն խալըսեցաւ  
ու բոլորովին առողջացաւ:

Նոյն օրերը տեսիլք տեսնող  
կուսին խոստովանահայրը ու-  
րիշ մօտիկ քաղքէ մը թուղթ  
առաւ թէ միտալին հրաշքովը  
քոչերայէն բռնըւած մէկ ու-  
րիշ հիւանդ մըն ալ առողջա-

ցեր է : Անկէց ետքը ասդիէն  
անդիէն ասանկ խապարներ շատ  
լրտուեցան :

Տղուն մէկը հինկ տարեկան  
եղեր է՝ ոտք չէ ելած եղեր .  
շատ կերպ դեղ կրնեն երևելի  
բժիշկներ , ճարը չեն դանար  
ոտք հանելու : Խեղճ տղուն  
մայրը կրտենայ որ մարդկային  
հնարք չիբանիր , սրտանց սուրբ  
Աստուածածնայ կապաւինի ,  
հրաշագործ միտային մէկը աղ-  
ղուն միզը կրկախէ , ու կրսկսի  
իննորեայ ջերմեռանդու թիւնը  
նեւ : Առջի օրը սկսածին ալէս՝  
տղան ոտք կելլայ կրսկսի հա-  
մարձակ քալել :

Ասանկ հրաշքներով որ ան-  
գադար ասդին անդին կրլլային ,  
ամմէնուն ջերմեռանդու թիւնը  
վառուեցաւ . ամմէնքն ալ սկը-  
սան ան միտալը վնտուել . հը-  
րաշքներն ալ երթալով շատ-  
ցան : Մենձ հրաշքը ան է որ

չատ անդեղջ մեղաւորներ մե-  
ղայի եկան, անխոստովանանք  
մարդիկ խոստովանահօրներուն  
ոտքը վազեցին, և իրենց դար-  
ձովը ուրիշներուն ալ բարի օ-  
րինակ եղան :

Աս ջերմեռանդութիւնը չէ  
թէ միայն Փարիզէն դուրս բո-  
լոր Ֆրանսա տարածուեցաւ,  
հասաւ ուրիշ հեռու տեղուանք  
ալ. ինչպէս Չուիցերի, Սպա-  
նիա, Իտալիա, Ինկիլթէռա,  
ինչուան Ստամբուլ, Էնկիւրիւ,  
և բոլոր արևելք, մինչև Չինու-  
մաչին ալ. ուստի ասդին անդին  
կոխուած ու սիւրւած միտալ-  
ներուն համրանքը միլիոններ ե-  
ղաւ :

Միտալին առջի պատմութիւնը  
և առջի հրաշքները նոյն տե-  
սիւքը տեսնող կուսին խոստո-  
վանահայրը գրեց՝ առանց իր ա-  
նունը տալու. ետքը ուրիշներն  
ալ նոյն պատմութիւնը գրեցին



էտեւ էտեւ եղած հրաշքներովը,  
որ շատ տեղ շատ անգամ տպե-  
ցին այլևայլ լեզուով:

Մենք հրաշքներուն մէկն ալ  
աս է որ յամի տեառն 1833  
չնչահաւատ զինուորին մէկը իր  
հիւանդութեանը համար հի-  
ւանդանոցը դրին. հոն անգա-  
րար հայհոյութիւններ կրնէր  
Աստուծոյ դէմ, եկեղեցնայ  
դէմ, քահանայից դէմ, ու իրեն  
ծառայողներուն դէմ: Ասոնք  
ամմէն ճարը ըրին որ ասոր բե-  
րանը բռնել տան, ճար չեղաւ.  
Ետքը մէկը ասոր անկողնին քո-  
վը՝ առանց իր խմանալուն՝ հրա-  
շագործ միտալ մը կախեց, ու  
բոլոր սրտանց յանձնեց զինքը  
սուրբ Աստուածածնայ որ դարձ  
տայ աս անգարձ մեղաւորին,  
որ բոլոր հիւանդներն ալ կը  
դայթակղեցրնէր իր հայհոյանք-  
ներովը. իր ընկերներուն ալ ա-  
ղօթք յանձնեց անոր համար:

Վերան քիչ մը անցաւ, աս հիւ  
 ւանդին սիրտը կակղցաւ. ան  
 միտալին չէ թէ միայն դէմ չի  
 կեցաւ, հասա սկսաւ անդա  
 դար վերան նայիլ ու ըսել. Ա  
 սիկայ միտալ չէ, վառած ճրագ  
 մըն է: Վամաց կամաց բոլոր  
 վին փոխւեցաւ, խոստովանանք  
 ըլլալ ուղեց, սրբութիւն ու  
 զեց, վերջին օժում առաւ.  
 անանկ ճշմարիտ դարձի եկաւ  
 որ առաջուց իր վերայ գայ  
 թակղողները բոլոր շինւեցան,  
 փառք արւին Աստուծոյ և սուրբ  
 Աստուածամանայ. և այսպէս եր  
 ջանիկ մահուամբ վախճանեցաւ  
 զինուորը նոյն տարին:

Ուրիշ հիւանդ մը կար որ տա  
 րիէն աւելի թեխ ցաւ ունէր.  
 բժիշկները յուսահատեցան ա  
 սոր կենացը վերայ. թեր կրա  
 րենք ալ նէ՛ չապրիր կրակին:  
 Ասոր Աստուածամանայ հրաշա  
 դործ միտալներէն մէկը արւին.

բոլոր սրտանց անոր ապաւել-  
 նած՝ իննօրեայ աղօթք կրնէր .  
 մէյնալ տեսնաս որ աղօթքին  
 ութերորդ օրը երբոր խոստու-  
 վանանք կըլլար որ սրբութիւն  
 առնէ, յանկարծ բոլորովին ա-  
 ռողջացաւ յամի 1834 :

Ասոնց նման անբաւ հրաշք-  
 ներ եղան աս տարիներս ամեն  
 տեղ : Ինչպէս նոյն տարին Ղա-  
 տամազօլ համր կնկան մը դժտուն  
 վերայ դրեր էն աս միտալը, մէ-  
 կէնիմէկ լեզուն բացւեր է :  
 Գարձեալ հոն ութը տարիէն  
 ՚ի վեր անդամալոյծ պառկած  
 հիւանդը աս միտալին հրաշքո-  
 վը յանկարծ բուրնացեր է : Նը-  
 ման հրաշք մը նաև Կնկիւրիս  
 եղեր է յամի տեառն 1835 :

Նոյն տարին Ստամազօլ մէկ  
 կին մը տամազայէն զարնրէր էր .  
 ասոր որդին բարեպաշտ տղայ  
 մը ըլլալով շուտ մը իր վզէն կը  
 հանէ աս հրաշալոյթը միտալը :

մօրը վիզը կանցրնէ, ու ինքը կը  
վազէ բժիշկ ու քահանայ բե-  
րելու: Մէյմընալ բժիշկը ու  
քահանան տուն կը հասնին կը  
տեսնան որ կինը ողջ առողջ  
նստեր է: Իրիկունը տղան իր  
միտալը կուզէ մօրմէն կառնէ.  
բայց մէկէն 'ի մէկ տամլան նո-  
րէն կիջնայ կնկանը վերայ. ան-  
ատենը նորէն միտալը կը կա-  
խեն անոր վիզը, ալ չեն հա-  
ներ. հիւանդութիւնն ալ մէյ-  
մընալ անոր չի մօտենար:

Աս տարւանս սկիզբը եօթա-  
նասունուերկու տարեկան հո-  
ռոմ մը կար Ա ենեաիկ որ հի-  
ւանդութեանը համար Ա ենե-  
աիկու հիւանդ հոգացող կրօ-  
նաւորներուն վանքը դուեր էր:  
Ասոր քանի մը անգամ անու-  
շութեամբ յորդորանք կրնեն  
կրօնաւորներն որ ճշմարտու-  
թիւնը ճանչնայ՝ ուղղափառը  
լայ. բայց անիկայ բոլորովին

կրմերթէ, եւ ինչ դաւանանքի  
 մէջ որ ծներ եմ ու այսչափ  
 ասրի ասրեր եմ՝ անոր մէջը  
 կուղեմ մեռնիլ ըսելով: Աղէկ  
 որ աս ճշմարտութեանը կրհա-  
 մողէ, թէ ինչպէս որ Աստուած  
 մէկ է՝ ճշմարտութիւնն ալ մէկ  
 է. ուստի սէտք է որ կամ հոռ-  
 մի հաւատքը ճշմարիտ ըլլայ,  
 կամ ուղղափառութիւնը. բայց  
 թէ որն է ճշմարիտը՝ կրակը  
 սի տարակուսիլ: Անատենը ի-  
 րեն ծառայող կրօնաւորը կրսէ  
 թէ ուրեմն ասոր որոշմունքը  
 սուրբ Աստուածածնայ յանձնէ:  
 Յանձ կառնէ հիւանդը, կրխոս-  
 տանայ որ սրտանց լոյս խնդրէ  
 սուրբ Աստուածածնէն, և աս  
 հրաշագործ միտաներէն մէկը  
 կառնէ սիրով վեղը կրկախէ:  
 Մէյմալ երկրորդ առաւօտը կր-  
 կանչէ զկրօնաւորը, եւ ուղղա-  
 փառ կրլամ կրսէ, և կրհաւ-  
 տամ բոլոր սրտանց՝ որ սրբա-

զան սրապը Քրիստոսի տեառն  
 մերոյ փոխանորդն է, և սուրբ  
 Եկեղեցոյ մէկհասիկ երևելի  
 գլուխն է: Արժնաւորները աս  
 անկեղծ դաւանանքին վերայ  
 թէպէտ կուրախանան, բայց մէ-  
 կէն չեն հաւտար. անոր հա-  
 մար շատ կըհարցրնեն կըքննեն  
 միտքը, և աս ալ կիմացրնեն ի-  
 յեն որ ամենեին իրենցմէ կամ  
 ուրիշ ուղղափառներէն մարմ-  
 նաւոր շահի մը աչք պիտի չու-  
 նենայ: Անիկայ չէ թէ միայն  
 մտքին վերայ հաստատ կըկենայ,  
 հասկա իր զաւկրներն ալ երկու  
 իրէք օրէն ետև ղինքը տեսնա-  
 լու կուգան նէ՛ անոնց ալ կի-  
 մացրնէ իր միտքը և կըցորդորէ  
 օր իրենիք ալ դառնան: Անկէց  
 ետքը օրէ օր ջերմեռանդու  
 թիւնը աւելցրնելով նոյն վան-  
 քին մէջ կըխոստովանի կըհա-  
 ղորդւի, վերջին օծումը կառ-  
 նէ, և աս տարի (1838) յունվարի

տասներհինկին ուրախ զուարթ  
 ու գոհ սրտով կրվախճանի սրբ  
 բութեամբ ու նախանձելի մա  
 հուամբ : Քանի մը օրէն ետքն  
 ալ իր եօթը հասուն զաւկրնե  
 րը՝ հինկ աղ ջիկ և երկու մանչ  
 կրնդունին ուղղափառութիւր ,  
 աւելի յանձն առնելով որ ի  
 րենց ազգին աչքէն խնան , և ի  
 րենց ձեռքին աշխատանքովը  
 ապրին , քան թէ սուրբ եկե  
 ղեցիէն դուրս մնալով իրենց  
 հոգւոյն փրկութիւնը կորսն  
 ցնեն :

Ասանկ և ասոնցմէ մեծամեծ  
 հրաշքները բոլոր գրելու ըւ  
 լայինք նէ՛ մենծ գիրք մը շինել  
 սէտք կըլար , ինչպէս որ շատը  
 շիներ են : Բայց մենք կըցուսանք  
 որ սուրբ Աստուածածնայ բա  
 րեխօսութեան ուժը ճանչցող  
 ջերմեռանդներուն սիրտը աւել  
 լի բորբոքելու համար այսչափ  
 ալ բաւական կըլայ : Արմնայ

որ ինչպէս որ պէտք է նէ միա-  
միտ հաւատքով աստուծոյն ի-  
րեն գթութեանը, և որդիական  
համարձակութեամբ իր առջևը  
դնենք մեր ամեն կարօտու-  
թիւնը, մանաւանդ մեր հոգևոր  
կարօտութիւնները և հիւան-  
դութիւնները. և թէ որ մարմ-  
նաւոր հիւանդութենէ կամ  
փորձանքէ ալ խալըսիլ ուզենք  
նէ, բուն վախճաննիս Աստու-  
ծոյ փառքը և սուրբ Աստուա-  
ծածնայ սրտիւր ըլլայ:





Ա Ղ Օ Թ Ք

ՍՈՒՐԲ ԱՅԳՈՒՄԺՈՋՆԱՅ  
ՔԵՐՏԵՆՆԵՐ ԸԼԼՄԼՆ  
ԿՈՏՈՐ :

ՍՈՒՐԲ ԱՅԳՈՒՄԺՈՋՆԱՅ, մայր  
Յիսուսի և մայր խմ, ես քու ան-  
պիտան ծառայող ըլլալով երբոր  
կրտսնամ որան թիւ հրեշտակ-  
ներ ու բիւրաւոր սուրբեր եր-  
կինքը քեզ կրտսաւ որեւն, հա-  
ղարաւոր կենդանի սուրբեր ալ  
երկրիս վերայ քու սիրովդ վառ-  
ւած՝ քեզի կրծառայեն, ա-  
հա բոլոր սրտանց քու գթու-  
թեանդ ոտքը կիցնամ ու կրտսն-  
դրեմ. ընդունէ զիս ալ քու սի-  
րելի ու հաւատարիմ ծառա-  
ներուդ կարգը. վառ է խմ սիրտս

ալ քու անարատութեանդ սի-  
 րովք . խելքս միտքս ըլլայ քեզ  
 ինչպէս որ պէտք է 'նէ' սրբու-  
 թեամբ պատուել, և ուրիշներն  
 ալ քեզի ջերմեւանդ ըլլալու  
 յորդորել: Բոլոր կենացս մէջ  
 քու և քու միածնիդ սուրբ ա-  
 'նունը սրտէսու բերնէս ջնալի-  
 սին, և մահուանս ատենը քու զօ-  
 լաւոր միջնորդութեամբդ ար-  
 ժանի ըլլամ անարատութեամբ  
 աւանդել: Հոգիս քու ձեռքդ, և  
 յաւիտենական փառացդ մէջ  
 քեզ տեսնալ ու փառաւորել:  
 Ամէն:



261